

նուր դպիրն նամակք՝ յիշխանն խորոց սրտէ
հառաչէր եւ արտաւսր հեղոյր եւ ինչք ու
ապրանք եւ զգլուխն իւր ի մահ հրաւիրէր
ասելով, թէ Արիւն իմ ընդ ձեզ եւ ընդ անա-
պատաւորացդ խառնեսցի վասն հաւատոց եւ
կրանից սուրբ հարցն :

Դարձեալ ասաց յիշխանն Հայկազ, թէ
Խօջայ Նազարն տուաւ ունել զՄելքիսէթն ի
Շահոյն, զոր սպանել տայր¹². Ես աղաչեցի
Խօճայ Նազարն որ եթող. զձեր խրատն չէի
լսեալ : Այժմի(կ) Դաւիթն այլ զնացեալ է ի
Սպահան : Եւ Աւատիսն կայ ի Էջմիածինն եւ
ասվիս զգեցեալ. եւ մեզ սիրելութեան թուղթ
է առաքեալ. որ մեր յՆրուսաղէմայ գալն
փոքր ի շատէ աստուածավախութիւն տեսաք
ի նմա : Բայց Ասլանինանէ լսեցաք թէ ի հրա-
մանուց կողմանէ թուղթ է եղեր առաքեր ի
Կոստանդինուպոլիս. ես ոչ եմ իմացեր. ան-
մեղադիր ըեր մեզ ի յայն կողմանէ :

Բայց այժմի խորհուրդ մեր այս է հետ
Պօղոս վարդապետին եւ անապատաւորացն եւ
բարեպաշտ յիշխանին Հայկազոյ, որ գնամք
ի Սպահան, քարոզեմք Ջուղայեցոյցն զաս-
տուածային բանն ի սուրբ հարցն կանոնաց.
այն սուտ կաթողիկոսքն կամ սիրով հրաժա-
րել, անապատս մտանել, ապա թէ բուռն իշ-
խանութեամբ ընդգլխմանայ՝ մահացուցա-

¹² Հմմտ. Առ. Դարիժեցի, էջ 216—217 :